

## Չարց

Ինչպե՞ս է սահմանվում Արցախի Չանրապետության տարածքում գործող փոքր ՉԷԿ-երից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագինը:

### Պատասխան

Արցախի Չանրապետության տարածքում փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզավորման և այդ ՉԷԿ-երից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների սահմանման գործընթացը սկսվել է 2011 թվականից: Սակագների սահմանման համար հիմք է ընդունվել ՉՅ-ում գործող հաստատուն դրույքաչափը, որը կազմել է 18,274 դրամ/կիլովատտ/ժամ:

2018 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ Արցախի Չանրապետության տարածքում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրված է 18 փոքր հիդրոէլեկտրակայանների, որոնց ընդհանուր դրվածքային հզորությունը կազմում է 66.349 Մեգավատտ, էլեկտրական էներգիայի միջին տարեկան արտադրանքը՝ 379,671 մլն. կՎտ/ժ: Կառուցման փուլում են գտնվում 16 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ ընդհանուր դրվածքային հզորությունը 73.879 մեգավատտ, էլեկտրական էներգիայի միջին տարեկան արտադրանքը՝ 437,217 մլն. կՎտ/ժ: Կանխատեսվող ՓՉԷԿ-երի քանակը՝ 6:

Մինչև 2017 թվականի հունվարի 1-ը լիցենզավորված փոքր հիդրոէլեկտրակայաններից (մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորություն) առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագինը կազմում է 25.4 դրամ/կիլովատտ/ժամ, ներառյալ ԱԱՉ՝ հաշվարկված Չանձնաժողովի 2009 թվականի մարտի 19-ի թիվ 15Ն որոշմամբ հաստատված մեթոդիկայի համապատասխան: Նշված մեթոդիկայով հաշվարկված սակագների հիմքում դրվում է անհրաժեշտ հասույթի (ԱՉ) ապահովման սկզբունքը, ըստ որի արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից էլեկտրական էներգիայի վաճառքից ստացված հասույթը պետք է բավարարի՝

- էլեկտրական էներգիայի հուսալի և անվտանգ արտադրության համար անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերի (ՇՊԾ) իրականացումը՝

- 1) *հիմնական արդյունաբերարտադրական անձնակազմի աշխատավարձ.*
- 2) *շահագործման համար անհրաժեշտ նյութական ծախսեր.*
- 3) *տեխնիկական սպասարկման և նորոգման ծախսեր.*
- 4) *իրացման ծախսեր.*
- 5) *վարչական ընդհանուր ծախսեր.*

էլեկտրական էներգիայի արտադրության համար օգտակար և օգտագործվող հիմնական միջոցների մաշվածության (Մ) հատուցումը,

- էլեկտրական էներգիայի արտադրության համար օգտակար և օգտագործվող ակտիվների դիմաց ողջամիտ շահույթի (Շ) ապահովումը:

ԱՉ -ն որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱՉ = \text{ՇՊԾ} + \text{Մ} + \text{Շ} :$$

Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի համար սահմանվում են միադրույք (դրամ/կՎտժ) սակագներ, որոնք հաշվարկվում են հետևյալ բանաձևով.

$$U = \text{ԱՉ} / \text{ԱԷ},$$

որտեղ՝ **ԱԷ**-ն առաքվող էլեկտրական էներգիայի քանակն է:

2017 թվականի հունվարի 1-ից հետո լիցենզավորված փոքր հիդրոէլեկտրակայաններից (մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորություն) առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագինը Հանձնաժողովի կողմից սահմանվել է 2017 թվականի մայիսի 25-ի N 28-Ն որոշմամբ և կազմում է 28,243 դրամ/կիլովատտ/ժամ ներառյալ ԱԱՀ: Սակագները սահմանվում և վերանայվում են Հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 26-ի N 18-Ն որոշմամբ սահմանված մեթոդիկայի համաձայն: Սակագները հաշվարկվում են հետևյալ հաշվարկային բանաձևով՝ հիմք ընդունելով գործող 25.4 դրամ/կիլովատտ/ժամ սակագինը.

$$T = T_1 \left[ K_1 \cdot \frac{CPI}{100} + K_2 \cdot \frac{R_1}{R_2} \right],$$

որտեղ՝

T-ն սահմանվող սակագնի մեծությունն է (դրամ/կիլովատտ ժամ),

T<sub>1</sub>-ը գործող սակագնի մեծությունն է (դրամ/կիլովատտ ժամ),

K<sub>1</sub>-ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման՝ սղաճի տեմպով պայմանավորված և ընդունվում է հավասար 0,35-ի,

CPI-ն Հանձնաժողովի նիստին էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա սպառողական գների ինդեքսն է նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ՝ հրապարակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից,

K<sub>2</sub>-ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքի փոփոխմամբ պայմանավորված և ընդունվում է հավասար 0,65-ի,

R<sub>1</sub>-ը Հանձնաժողովի նիստին էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքն է ընթացիկ տարում՝ հրապարակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից,

R<sub>2</sub>-ը R<sub>1</sub> մեծության որոշման համար ընդունված ամսվան համապատասխանող ամսվա ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքն է նախորդ տարում՝ հրապարակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից: